

ՀՐԱԹԱԲԻՄԻՔ . . .

Ռամկալարներու Պոսթընի խմբագիրը վերջերս «յօդուածաշարք» մը հրատարակեց իր թերթին մէջ՝ «Չարդուփշուր» ընկելու համար Դաշնակցութիւնը:

Տարիներէ ի վեր Ռամկալար-Ազատական օրկանին խելագար խմբագիրը սխնականեր կը լեցնէ Դաշնակցութեան ենթադրեալ մեղքերը համբելու համար:

Տարիներ շարունակ միևնոյն յանկերգը, միևնոյն սուտերն ու զրպարտութիւնները: Ու նաև միևնոյն անյատակ տգիտութիւնը մեր նորագոյն սլամօութեան կարեւոր դրուագներուն մասին:

Այս անգամ, անբարեխիղճ խմբագիրը ունի ուրիշ հէքեաթ մը:

Բառական ու քերականական սխալներով եւ շարագրական տղեղութիւններով լեցուն իր ինքնատի՛ւ հայերէնը («թարգմանելով»), կ'իմանանք որ Դաշնակցութեան մեղքերուն վրայ բարդուած է նոր մը:

Լեզուանի խմբագիրը — մէկը իր կուսակցութեան աշակաւորներէն — սլամօ սլամ կը գարնէ գլուխը՝ հաւատացնելու համար հայ ժողովուրդին որ Դաշնակցութիւնը սկսած է մատնել Ռամկալարներն ու մնացեալները:

Ուրիշ՞ ուր այս գիտար:

Որովհետեւ Դաշնակցութեան մամուլն ու բեմը կը յայտարարեն անպարտկելի եւ անմխտելի իրողութիւնը թէ Ռամկալարները կը կատարեն համայնալարական աշխատանք ու քարոզչութիւն, եւ ամէն հարցի մէջ, ամէն տեղ ու ամէն տեղ կը մտածեն ու կը գործեն «Յառաջդիմական» կոչուած թափփուք պոլշեփիկներուն պէս:

Բաղդաստեցէք այս զոյգ հոսանքներուն թերթերը:

Լսեցէք իրենց ճտուերն ու բանախօսութիւնները:

Հետեւեցէք իրենց քաղաքական մարզանքներուն՝ փառնայիրներէն ներս կամ դուրս, ու պիտի տեսնէք որ հիմնական ո՛չ մէկ տարբերութիւն կայ այդ երկու անասելի խմբակցութեանց քաղաքական հասկացողութեանց միջև:

Տարբեր ծրագիրներով ճամբայ ելած երկուքն ալ, մետասաներորդ ժամուն կնքած են սրտագին գործակցութիւն մը՝ որովհետեւ — (պէք հակառակին ընդ միմեանս, ի կորուստ մարդկան միարանին):

Փողոցէն անցնող հայն ալ աշք ունի ու կը տեսնէ, ահանջ ունի ու կը լսէ:

Ինչ կը վերստէ եւ պետական իշխանութեանց «աշք»ին ու «անկանջ»ին, մենք չենք որ պիտի բանայինք դանտնք:

Ռամկալարներու եւ մնացեալներուն խմբագրականներն ու յօդուածները — որոնց մէջ սլակաս չեն անբարեկիրթ ակնարկութիւններ այս երկրին բարձրագոյն պաշտօնատարին դէմ Մարտ 12-էն ստղին — բաւական պերճախօս են այդ տեսակէտէն, եւ՛ մեզի եւ՛ օտարներուն համար:

Մատնութի՞ւն:

Բայց այս որքա՛ն յառաջ տարեր էք լրբութիւնը:

Որքա՛ն յառաջդիմեր էք կեղծելու արուեստին մէջ:

Այս ի՛նչ փրփուր ու կատաղութիւն՝ կուսակցութեան մը դէմ, որուն մահալծիւր արձակեցիք տարիներ առաջ:

Դո՞ւք, Ռամկալարներ՞ ըրէք, որ պիտի ամբաստանէիք Դաշնակցութիւնը մեղքով մը որ ձեր հակադաշնակցական մոլուցքին մէջ եղաւ ձեր գլխաւոր զրադումն ու ժամանցը:

Բաւական յանդուգն էք ու անպատկառ:

Դուք չէի՞ք որ 1941-ին երբ Էնկիւրին ստայօդ լուրեր կը տարածէր մեր մասին, կը զրէիք ձեր թերթերուն մէջ թէ, Դաշնակցութիւնը դաւադրական գործերու ընդունակ է: Եւ քանի՛ յօդուած ու խմբագրական գրեցիք այդ նիւթին շուրջ՝ թուրքը արդարացնելու եւ Դաշնակցութիւնը վարկարեկելու համար՝ պատերազմի ահաւոր օրերուն:

Դուք, եւ ձեր սրտակից բարեկամները չէի՞ք որ Սան Ծրանսիսքոյի Խորհրդաժողովին մէջ, անասելի լրբութեամբ, զրպարտեցիք մեր կուսակցութիւնը:

Դուք եւ ձեր լուսադրարները չէի՞ք որ անցեալ տարի Ծրանսայի մէջ կը մատնէիք Դաշնակցութիւնը, թրքալարի ժուրնալով մը, իրրե ֆաշիական կաղմակերպութիւն:

Ձեր լուսադրարներէն մէկը չէ՞ր որ երկու տարի առաջ Երեւանի փողոցներուն մէջ ուրիշ սլամօսլամաւորի մը երեսին հերոսարար կը սլոտար — Դո՛ւն Դաշնակցական ես . . .

Ձեր «փափկասուն»ներէն մէկը չէ՞ր որ, տակաւին ամիսներ առաջ, օտար անձնաւորութեան մը կը բացատրէր — գաղտնարա՛ր — որ Դաշնակցութիւնը նացիական կուսակցութիւն մըն է, զգո՛ւշ . . .

Դուք կամ ձեր հոգեհատոր համայնալարները չէի՞ք որ, երէկ, ստիկանութեան սլաշտօնապէս մատնեցիք անհատ մը իրրե ֆաշիստ: Եւ ուրիշներ:

Երկարե՞նք շարքը՝ վար առնելու համար ձեր դիմակը:

Մատնութի՞ւն: Դաշնակցութեանէ՞ն:

Դացէք ու հասկեցէք ուրեմն, թէ ինչ տեղեկութիւններ տուած են ձեր ու ձեր աղբարիկներուն մասին, իրարմէ երկու հարիւր մղոն հեռու ապրող երկու Դաշնակցականներ երբ իրենց մօտ գացած են ծանօթ սպասարկութեան մը ներկայացուցիչները:

Իմացէք ու քիչ մը կարմրեցէք:

Ո՛չ համոզում ունիք, ո՛չ տեսակէտ: Չունիք մանաւանդ քաջութիւն: Եւ հիմա երբ համայնալարներուն աստղը կը շիջի քիչ մը ամէն տեղ, կը կատարէք անփառունակ նահանջ մը:

Հրաժարի՛մք ի սատանայէ . . .

Ի՛նչ պերճախօս է ձեր երեւելիներէն մէկուն խոստովանութիւնը — Սխալ մը գործեցինք միւսներուն միանալով . . . ժամ առաջ հեռանալու ենք . . .

Տարիներ առաջ ծամծմեցիք ողբացեալ Յովհաննէս Քաջազնունիի «Անելիք չունի»ն:

Գաղտնի կը պահէք, սակայն, ուրիշ Յովհաննէսի մը յայտարարութիւնը, ձեր Յովհաննէսը՝ երեւելի Ռամկալար, որ անսովոր քաջութեամբ, կը սլոտայ ձեր երեսին. —

— Ռամկալար-Ազատական կուսակցութիւնը անելիք չունի, լուծեցէ՛ք . . .

Ո՞վ բտաւ թէ չունի — հապա ո՞վ պիտի ստէ, կեղծէ, հայհոյէ ու մատնէ երբ ան հեռանայ ասպարէզէն:

Ո՞վ թե ու թիկունք պիտի ըլլայ միւսներուն, Դաշնակցութիւնը տապալելու համար . . .

Ո՞վ պիտի ստղայ . . .